

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Վ. Ն. ՂԱԶԱՆԵՑՅԱՆ

Աշոտ Գաբեգինի Հովհաննիսյանը խորհրդահայ առաջին նշանավոր պետական-կուսակցական գործիչներից էր, իտշորագույն պատմաբան: Նա եղել է Խորհրդային Հայաստանի լուսավորության առաջին ժողովրդական կոմիսարը, ապա՝ ՀԿ(Բ)Կ կենտկոմի գլխավոր քարտուղար: Մեծ են նրա ծառայությունները նորաստեղծ Խորհրդային Հայաստանում լուսավորության, գիտության, գրականության և մշակույթի մյուս բնագավառների հիմնախնդիրների լուծման մեջ:

Լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի առաջին երկու հրամանները (1920թ. դեկտեմբերի 15) վերաբերում են ժողկոմատի կազմակերպչական-կադրային հարցերին:¹ Դրանց համաձայն, պաշտոնից ազատվում են նախկին իշխանության հանրային կրթության և արվեստի նախարարության որոշ աշխատողներ, հաստատվում են ժողկոմատի բաժինների վարիչներ: Վերջիններիս թվում էր նաև բանաստեղծ Եղիշե Չարենցը, որը գրադեցնում էր արվեստի բաժնի վարիչի պաշտոնը:

Կադրերի սով էր Հայաստանում: Ուստի Աշ. Հովհաննիսյանը հեղկոմին ուղղած դեկտեմբերի 29-ի միջնորդությամբ խնդրում է իր տրամադրության տակ թողնել որոշ մասնագետների, որոնք հայկական բանակի սպաների թվում պետք է աքտրվեին Ռուսաստան² (նման միջնորդություններ անում էին նաև մյուս ժողկոմատները):

1921թ. մի շարք հրամաններով կատարվում են նոր նշանակումներ. Աշխարհբեկ Քալանթարը դառնում է հնությունների և գեղարվեստական հուշարձանների պահպանության հանձնաժողովի քարտուղար, Լևոն Լիսիցյանը՝ Էջմիածնի գավառի պետականացված կուլտուր-կրթական հիմնարկությունների կոմիսար (Լևոն Լիսիցյանը հայտնի ազգագրագետ Մտեփան Լիսիցյանի որդին էր): Գարաքիլիսայի լուսրաժնի վարիչ է նշանակվում Մարութե Դուրգարյանը: Ամո (Համո) Խարազյանը արվեստի բաժնում քատերական գծով հրահանգիչ էր, Շուշանիկ Կուրդինյանը՝ ժողկոմատի գեղարվեստական կոմիտեի քարտուղարը, Ռոմանոս Մելիքյանը՝ ժողկոմատի երաժշտական ստուդիայի վարիչը, Լևոն Քալանթարը՝ քաղլուսվարչության քատերական ենթարաժնի ժամանակավոր վարիչը:³ Ժողկոմատում աշխատանքի ներգրավվեցին նաև Տիգրան Մուշեղյանը, Հայկ Յաղուրյանը⁴ և մշակույթի այլ գործիչներ:

¹ Տե՛ս ՀՀ Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՎՊԱԿ), ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 1 և հակ.:

² Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 3, թ. 2:

³ Նույն տեղում, ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 6, 7 հակ., 25, 30 հակ., 38 հակ., 39 հակ., 45:

⁴ Նույն տեղում, գ. 17, թ. 22-23:

Աշոտ Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում էր գիտության քննազավառը, մասնավորապես՝ պատմագիտությունը, որը նրա տառերքն էր: Կատարվում են գիտական գործի կազմակերպման առաջին քայլերը: Գիտական անդրամիկ հիմնարկությունը դարձավ Էջմիածնի գիտական կամ կուլտուր-պատմական ինստիտուտը, որը ստեղծվել էր 1921թ. փետրվարի 5-ի դեկրետով: Ինստիտուտի կոմիսարը և գիտական կոլեգիայի նախագահը Կարապետ Սելիք-Օհանջանյանն էր, գիտական քարտուղարը՝ Երվանդ Տեր-Սինասյանը, քանգարանապետը՝ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանը, մատենադարանապետը՝ Մենքերիմ Տեր-Հակոբյանը, տպարանի վարիչը՝ Խաչիկ Մամվելյանը: Ինստիտուտն ուներ ընդամենը երկու գիտական աշխատող, երկուսն էլ պատմաբան՝ Դավիթ Ամանունը և Լևոն (Առաքել Բաբախանյանը): «Բնագիրներ և հետազոտություններ» խորագրի տակ ինստիտուտը տպագրեց իր առաջին գիրքը՝ Շապուհ Բագրատունու մինչև այդ կորած համարված պատմությունը: Երկրորդը Աշոտ Հովհաննիսյանի «Հայ-ռուս օրինատացիայի ծագման խնդիրը» ուսումնասիրությունն էր:⁵

Լևոն տվյալ պահին ապրում և աշխատում էր Թիֆլիսում, ուստի Աշոտ Հովհաննիսյանը Վրաստանում Հայաստանի ներկայացուցչությանը հայտնում է վերջինիս համար աշխատանքային պայմաններ ստեղծելու անհրաժեշտության մասին, այն է՝ վճարել աշխատավարձ (լուսժողկոմատի հաշվին սահմանվում է ամսական 300 հազար ռուբլի⁶) և, որպես «խորհրդային բարձր կատեգորիայի աշխատակից», աջակցել, որ նա ստանա խորհրդային ծառայողներին տրվող պարենը, ձեռք բերի գրադարանի համար «անձեռնմխելիության մանդատ», այսինքն՝ բռնագրավման չենթարկվի, իրավունք ստանա աշխատելու Վրաստանի պետական արխիվներում (մասնավորապես նախկին վոխարքայության դիվանում) և մատենադարաններում:⁷

Աշոտ Հովհաննիսյանը կոլեգիայի որոշումով Լևոն Թումանյանին նշանակել էր Վրաստանում Հայաստանի ներկայացուցչության լուսրաժնի վարիչ, որը Վրաստանում իրականացնում էր ժողկոմատի բոլոր աշխատանքները: Այդպիսի ծրագրային աշխատանքներից էր, օրինակ, լուսժողկոմատի արվեստի բաժնի ղեկավարի համար հարմար քեկնածու գտնելը, որը, ըստ Աշոտ Հովհաննիսյանի, Արշակ Ադամյանն էր: Ժողկոմը գտնում էր, որ արվեստի բաժնի գործունեությունը կաղում է: Այս մասին նա գրել է 1921թ. հուլիսի 27-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ՝ ըստ մեր կատարած ուսումնասիրությունների, Եղիշե Չարենցը այլևս չէր ղեկավարում տվյալ բաժինը: «Գլխավոր պատճառն այն է, իհարկե, - գրում էր նա, - որ հայ արվեստի աշխատավորները մշակել են այն հարմար իդեոլոգիան, որ հայ արվեստի կուլտուրան Հայաստանի բանվորա-գյուղացիական իշխանության օրոք իսկ պետք է շարունակի զարգանալ զարգության հայ բուրժուազիայի ջերմոցում՝ Վրաստանի մայրաքաղաքում: Մյուս կողմից, - շարունակում է ժողկոմը, - Հայաստանում մինչև այժմ հնար չեղավ գտնել ար-

⁵ Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 20, ք. 152 և հակ.:

⁶ Նույն տեղում, գ. 77 (մաս 2), ք. 440:

⁷ Նույն տեղում, ց. 1, գ. 84, ք. 85:

վեստի խնդիրներում զգայուն մի կազմակերպող, որ անցներ արվեստի րաժնի գլուխը»⁸:

Հետաքրքիր են այդ նույն գրության մեջ բարձրացված մյուս հարցերը ևս: Այսպես՝ ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը հայտնում է, որ Հայաստանում բավական նյութեր կան հավաքված «գեղարվեստական մուզեյի» համար, որ այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել նաև Թիֆլիսում՝ Լալսյանի կողմից: «Խնդրում եմ, - գրել է նա, - հոգ տանեք լրացնելու քերին: Պետք է այս կամ այն եղանակով պարպել հայ բուրժուազիայի սրահները կահավորության միջոց ծառայող գեղարվեստական իրերից»⁹:

Հայաստանի ներկայացուցչությունից պահանջվում էր նկարիչ Տարագրոսից ստանալ այն բոլոր գեղարվեստական իրերը, որ Դրեմի հայերն ուղարկել էին Հայաստանի համար: Տարագրոսին ևս առաջարկվել էր մեկնել Հայաստան՝ Էջմիածնի գիտական ինստիտուտում աշխատելու նպատակով: Պետք է ձեռք բերել «Հայաստանի գեղարվեստական մուզեյի համար պորցելանի այն ժողովածուն, որը գտնվում էր Գարեգին Գարդիշյանի տրամադրության տակ: Հովհաննես Թումանյանից ստացվելու էին Սայաթ-Նովայի ձեռագրերը: Այդ բոլոր իրերը դրվելու էին գեղարվեստական մուզեյում, իսկ ամայժմ ժամանակավորապես հանձնվելու էին Ազգագրական մուզեյին»¹⁰:

Մի այլ գրությամբ Աշոտ Հովհաննիսյանը խնդրում էր միջոցներ ձեռք առնել կորստից փրկելու Վրաստանի սահմաններում գտնվող «հայ հնությանց հիշատակարաններն ու արխիվները», մասնավորապես՝ Գյուտ քահանա Աղանյանի ժառանգների մոտ պահվող ձեռագրերն ու քղթերը, որոնք հարուստ աղբյուր են հայոց պատմության նոր շրջանի համար: Ընդ որում այդ նյութերի մի մասը, ինչպես տեղեկացնում էր Աշոտ Հովհաննիսյանը, Էջմիածնի մատենադարանի և դիվանի սեփականությունն էր: Այս գրության վրա կա այսպիսի մակագրություն. «Ստացա 21 հունիսի 1921թ., Թիֆլիս, Ա. Կանայան»¹¹:

Աշոտ Հովհաննիսյանը հեռագրով Թիֆլիսի հայկական ներկայացուցչությունից խնդրում էր լուսժողկոմատի համար ձեռք բերել հայերեն երկու ձեռագրեր, որոնք գտնվում էին Ալեքսանդր Պոպովյանի կնոջ մոտ: Ներկայացուցչության ղեկավար Սուրխաթյանը մակագրել է. «Շտապ կատարել Իվան Պոպովյանի միջոցով»¹²:

Աշոտ Հովհաննիսյանի լիազորությամբ Թիֆլիս էր մեկնել Դ. Ջավրյանը՝ կազմակերպելու Հայաստանին պատկանող գրադարանների ու ժողովածուների Երևան փոխադրելը, ինչպես նաև այնտեղ ձեռք բերելու իրեր ու սարքեր՝ Երևանում ստեղծվող կենտրոնական բնագիտական լաբորատորիայի համար: Հայկական ներկայացուցչությանը խնդրվում էր լիակատար աջակցություն ցույց տալ Ջավրյանի առաքելությանը¹³:

Լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1921թ. հոկտեմբերի 1-ի գրության հասցեատերը արտգործժողկոմն էր, որին խնդրվում էր միջնորդել Վրացա-

⁸ Նույն տեղում, գ. 136, ք. 2 և հակ.:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում. գ. 84, ք. 130:

¹² Նույն տեղում, գ. 136, ք. 93:

¹³ Նույն տեղում, գ. 68, ք. 29 և հակ.:

կան կառավարությանը՝ աջակցելու Հայաստանի հնությունների ու արվեստների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար Աշխարհբեկ Լոռի-Քալանթարին՝ Երևան տեղափոխելու հայկական այն հնությունները, որոնք 1916-1918թթ. տարվել էին Թիֆլիս և պահվում էին այնտեղ: Դրանք էին՝ Աճիի դրամները՝ մի առանձին արկղի մեջ, որ 1918թ. սկզբին Գ. Գորդեևը Աճիի հնադարանից վերցրել և Թիֆլիս էր հասցրել Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի կարգադրությամբ: Մյուսը Առաքելոց վանքի նշանավոր դուռն էր, որ 1916թ. Հայաստանից Թիֆլիս էր վտարադրվել Ս. Տեր-Ավետիսյանի միջոցով և ժամանակավորապես պահվել Կովկասյան քանդաքանում՝ Էջմիածին վերադարձնելու պայմանով:¹⁴

Արտաքին գործերի ժողկոմին ուղղված մի գրությամբ Աշոտ Հովհաննիսյանը խնդրում էր օգնել՝ Հայաստան ուղարկելու Հարություն Անժուր Չերտաքյովի իրերը, որը Գելենջիկից եկել էր Երևանի ժողովրդական համալսարանում աշխատելու: Իրերի մեջ էին Անժուրի գրքերը, դաշնամուրը և այլն: Արտգործժողկոմ Ա. Մոսվյանը մակագրել է. «Գրել Գելենջիկի գործկոմին»¹⁵: Նույն հասցեատիրոջն ուղղված մի այլ գրություն վերաբերում է Սարգիս Խաչատրյանին և Գրիգոր Շարքաբջյանին՝ աջակցելու, որ նրանք մեկնեն Կոստանդնուպոլիս՝ այնտեղ նկարչական ցուցահանդես կազմակերպելու համար:¹⁶

Աշոտ Հովհաննիսյանի երկու գրությունները ինքնագիր են: Մեկը, որ ուղղված է Հարություն Սուրխաթյանին, վերաբերում է վերոհիշյալ հայերեն երկու ձեռագրերին: «Ինձ տեղեկացրին, - գրել է Աշոտ Հովհաննիսյանը, - որ Ալեքսանդր Պոպովյանի կնոջ մոտ կա երկու շատ արժեքավոր ձեռագիր, որ անհրաժեշտ է ձեռք բերել Հայաստանի մուզեյի համար...»¹⁷:

Մյուս ինքնագիրը, որ հասցեագրված է Հայաստանի լիազոր-ներկայացուցչին, հայտնում է, որ չորս օր առաջ դիմում է արվել Հայկոռային՝ վագոն ստանալու համար: Մակայն այն «չէր ստացվել, ինչպես ասում էին, Հայկոռայի քարտուղարի անփութության պատճառով: Իսկ դա, - գրել է Հովհաննիսյանը, - շփոթել է իմ բոլոր կարտերը: Ստիպված եմ, - շարունակում է նա, - վաղը մեկնել, երեսի վրա թողնելով ապրանքները, և որովհետև այդպիսի մի անփութություն չի կարող անպատիժ մնալ, խնդրում եմ միջոցներ ձեռք առնել՝ ձերբակալելու հանցավորներին»¹⁸:

Տնտեսական ծանր պայմաններում գտնվող Հայաստանի համար շատ դժվար էր իր ուժերով հաղթահարել խոչընդոտները և նույնիսկ նվազագույն պայմաններ ապահովել ժողովրդական լուսավորության ու մշակույթի մյուս քնազավառների գործը կազմակերպելու, մշակված ծրագրերը իրականացնելու համար: 1921թ. հունվարին հանրապետության լուսժողկոմը Ռազմահեղափոխական կոմիտեում զեկուցել է լուսավորության գործի վիճակի մասին: Հաստատելով զեկուցումը՝ ռազմհեղկոմը գրությամբ դիմել է Ռուսաստանի լուսավորության ժողկոմին՝ խնդրելով օգնություն ցույց տալ խիստ կարիքի մեջ գտնվող Խորհրդային Հայաստանին:¹⁹ Այդ ժա-

¹⁴ Նույն տեղում, ք. 110:

¹⁵ Նույն տեղում, ք. 71:

¹⁶ Նույն տեղում, գ. 21, ք. 161:

¹⁷ Նույն տեղում, գ. 136, ք. 69:

¹⁸ Նույն տեղում, ք. 67:

¹⁹ Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 31, ք. 67 և հակ.:

մանակ վերակառուցվում էր Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը (Լազարյան ճեմարան), ուստի, օգտվելով ամփօքից, Հայաստանի քարձրագույն իշխանությունը խնդրում էր Հայաստանի աշխատավոր զանգվածների կուլտուր-լուսավորական կարիքները թավարարելու համար հանրապետությանը հանձնել հիշյալ ինստիտուտի կարիքներին գույքը և գրադարանի կովկասագիտական գրականությունը: Նշենք, որ տվյալ ուսումնական հաստատությունը ժամանակին (1815թ.) կազմակերպել էին հայ մեծահարուստներ Լազարյանները, ուստի Խորհրդային Հայաստանը քարոյական իրավունքով էր դիմում նրա սեփականությունից օգտվելու համար և այդ օգնությունը ստացվեց: Ընդ որում, Աշոտ Հովհաննիսյանը մի ժամանակ դասախոսական աշխատանք է կատարել Լազարյան ճեմարանում:

Այժմ Աշոտ Հովհաննիսյանի հետ կապված մի հետաքրքիր մամակի մասին, որը վերաբերում է Ավետիք Բասահկյանին և Ալեքսանդր Երվանդադեհին:²⁰ Նամակը մեքենագիր պատճեն է, չունի ստորագրություն և ժամանակի մասին նշում: Մեր կարծիքով, մամակի հեղինակը կարող էր լինել Ասքանազ Մռավյանը, իսկ ժամանակը, հավանաբար, 1924-1925թթ.: Նամակը վերնագրված է «Բարև Պոլոս», որը պետք է լինի Պոլոս Մակինցյանը: Արծաթովոդ հարցի ամփօք, ինչպես նշված է մամակում, հեղինակը գրուցել է Արտաշեսի, Մաքոյի և Աշոտիսի հետ: Այո՛, հենց այդպես է՝ Աշոտիսի: Անկասկած՝ խոսքը վերաբերում է Արտաշես Կարինյանին, Մաքո Համբարձումյանին և Աշոտ Հովհաննիսյանին, որոնք հանրապետության ղեկավար գործիչներ էին: Ավետիք Բասահկյանը և Երվանդադեհն արտասահմանում գտնվում էին ծանր պայմաններում: Նամակի հեղինակը Ավետիք Բասահկյանի մասին տեղեկացել է Պոլոսի մի այլ մամակից, իսկ Երվանդադեհի մասին պատմել է «ողջ-ամողջ Հայաստան ապավինած Եղիշե Զարենցը»: «Երկուսի դրությունն էլ, - կարդում ենք մամակում, - ըստ պատմածի, թե՛ նյութական և թե՛ հոգեկան տեսակետից ըստ երևույթին հեռու է քավարար լինելուց: Մեր երեկվա գրականության այդ վերջին երկու ամենախոշոր դեմքերը դատապարտված են փլուզումի, կազմալուծման: Մեծ քանքը չսպասելով նրանցից ապագայում (քայց ո՛վ գիտե՝ գուցե սխալվում են, ծերացած ձիերն, ասում են, ընդունակ են մեծ թռիչքներ գործելու), այնուամենայնիվ, կարծում են, որ նրանց պիտի քերել Հայաստան և որոշ զգալի կենսաթոշակով ապահովել նրանց վերջալույսը»: Այնուհետև մամակից տեղեկանում ենք, որ Արտաշեսը, Մաքոն և Աշոտիսը միանգամայն համաձայն են Մռավյանի հետ և նրան հանձնարարել են գործը զլուխ քերել Պոլոսի միջոցով, որը և մամակի հեղինակը կատարում է:

Աշոտ Հովհաննիսյանը սերտ կապերի մեջ է եղել Եղիշե Զարենցի հետ, գործում դեր խաղացել նրա կյանքի որոշ պահերին: Նշենք, որ Եղիշե Զարենցը մի մամակ ունի՝ ուղղված «Հսրգեղի Աշոտ Հովհաննիսյանին», 1923թ. սեպտեմբերի 13-ին՝ գրված Թիֆլիսում, որտեղ նա գտնվում էր արտասահման մեկնելու քերումով:²¹ Հայտնելով արտասահմանյան իր խնդիրների մասին՝ Զարենցն այնուհետև խնդրում էր առաջաքան գրել իր

²⁰ Նույն տեղում, ֆ. 122, ց. 2ա, գ. 178, ք. 163 և հակ.:

²¹ Տե՛ս ՀՀ Հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀԶԿՓ ՊԿԱ), ֆ. 1, ց. 3, գ. 66, ք. 152 և հակ.- 153: Ինքնագիր:

«Երկիր Նսփրի» վեպի համար՝ հույս ունենալով արտասահմանում իրականացնել նրա երկրորդ հրատարակությունը: Մեզ, սակայն, հայտնի չէ՝ նամակին պատասխանե՞լ է Աշոտ Հովհաննիսյանը թե՞ ոչ: Բայց հայտնի է, որ վեպը համապատասխան առաջաբան չունի:

1926թ. Չարենցը մահափորձ էր կատարել Մարիաննա Այվազյանի դեմ և հայտնվել բանտում:²² Հետաքրքիր է քրեական գործի վկաներից մեկի ցուցմունքն այն մասին, թե երբ ատրճանակի կրակոցներից հետո Չարենցին տանում էին միլիտսին, նա կրկնում էր՝ «Հայտնեք Աշոտ Հովհաննիսյանին, որ ես մարդ եմ խփել»²³: Բնավ պատահական չէին Չարենցի խոսքերը, երբ նա հուշում էր կենտկոմի գլխավոր քարտուղարի անունը, քանզի տակավին 1921 թվականից նրանք բարեկամական կապերի մեջ էին: Դեպքի հաջորդ օրը՝ 1926թ. սեպտեմբերի 6-ին, Հայաստանի կոմկուսի վերստուգիչ հանձնաժողովին տրված բացատրության մեջ, անդրադառնալով դրա նախօրյակին իր ապրած ծանր հոգեվիճակին, Չարենցն ասել է, թե իր բոլոր ընկերներին խնդրել է, որ իրեն հնարավորություն տրվի գոնե մեկ ամսով հանգստանալ, զնալ ուրիշ տեղ, որ այդ ամենի մասին հայտնել է նաև Աշոտ Հովհաննիսյանին: Սակայն, դժբախտաբար, զնալու հնարավորություն չեղավ:²⁴

1926թ. դեկտեմբերի 25-ին լուսժողկոմ Ասքանազ Մռավյանը գաղտնի գրությամբ Աշոտ Հովհաննիսյանին հայտնում է. «Գրող Չարենցի դրությունը շատ ծանր է բանտում: Կարծում եմ այժմ կարելի է արդեն հարց բարձրացնել որևէ կարգով նրան ազատ արձակելու, Հայաստանի սահմաններից ժամանակավորապես դուրս գալու համար»²⁵: 1927թ. հունվարի 4-ին Աշոտ Հովհաննիսյանի ստորագրությամբ ՀԿ(Բ)Կ կենտկոմի նախագահությունը կայացնում է վճռական նշանակություն ունեցող որոշում:²⁶ Այս որոշումը նշանակում էր՝ «կանաչ լույս վառել» Եղիշե Չարենցին բանտից ազատելու համար, և 1927թ. մարտին Չարենցն ազատվեց բանտարկությունից՝ Աշոտ Հովհաննիսյանի վճռականության շնորհիվ:

Այսպիսով՝ խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության ակնհայտ գործիչ, տաղանդավոր պատմաբան, հայ ժողովրդի մեծ գավակ Աշոտ Հովհաննիսյանը մշտապես եղել է խորհրդահայ մշակույթի ձևավորման ու զարգացման ակունքներում, գործուն դեր խաղացել մշակույթի նշանավոր գործիչների կյանքում:

²² Վ. Ղազախեցյան, Եղիշե Չարենցի կյանքի էջերից (1926-1927թթ. բանտային օրեր), Նորք, 1997, № 4, էջ 62-67:

²³ ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 31, ց. 2, գ. 1, ք. 20:

²⁴ Բանքեր Երևանի համալսարանի: Հասարակական գիտություններ, 1987, № 2, էջ 81-82:

²⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 7, գ. 29, ք. 1ա: Բնագիր:

²⁶ Նույն տեղում, գ. 28, ք. 2:

АШОТ ИОАННИСЯН И СОВЕТСКОЕ АРМЯНСКОЕ ИСКУССТВО

В. Н. КАЗАХЕЦЯН

Р е з ю м е

Первый нарком просвещения Советской Армении, затем первый секретарь ЦККП(б)А Ашот Гарегинович Иоаннисян (1887—1972) внес большой вклад в развитие советской армянской культуры. Одной из главных задач руководимого Ашотом Иоаннисяном наркомата была подборка новых кадров.

В числе первых сотрудников наркомата, занимавшегося в те годы всеми областями культуры, были Егише Чаренц, Ашхарбек Калантар, Амо Харазян, Шушаник Кургиян, Левон Калантар, Тигран Мушегян, Айк Ягубян и другие деятели армянской культуры. В центре внимания историка Ашота Иоаннисяна была и историческая наука. Нарком был озабочен созданием условий работы для таких видных историков того времени, как Лео и Давид Ананун.

Тесная дружба связывала Ашота Иоаннисяна с Егише Чаренцем и другими писателями.

Будучи секретарем ЦККП(б)А, А. Иоаннисян сыграл решающую роль в освобождении Е. Чаренца из заключения в 1926—27 гг., когда по стечению обстоятельств поэт был осужден.